Մրցույթ՝ «Երևանի Էդ. Բոյաջյանի անվան թիվ 121 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմության (6 դասաժամ), տեխնոլոգիայի (10 դասաժամ), համաշխարհային պատմության (8 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ) ուսուցչի և դասվարի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

անձը հաստատող փաստաթուղթ, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձև 5),

այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 27-ին ժամը 14 ^{00} –ին Երևանի Էդ. Բոյաջյանի անվան թիվ 121 հիմնական դպրոցում, փաստաթղթերն ընդունվում են 06.09.2023 թ.-ից 19.09.2023 թ. ժամը 10^{00}-15^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից, հասցեն՝ Պ. Տիչինայի 2-րդ նրբանցք 121: Տեղեկությունների համար զանգահարել (010)74-15-81 հեռախոսահամարով: